

Ամեմ. Պատրիարք Սրբազան Հայրը բաշխեց մրցանակները իւրաքանչիւր դասարանի առաջին համդիսացող սանին ինչպէս նաեւ այն սաներուն որոնք Վարժարանի ընդհանուր ուսման, կենցաղավարութեան, վարքի եւ լեզուներու ուսմանց մէջ առաջին համդիսացած են:

Երուսաղէմացի Հայոց Բարեսիրական Միութեան փափաքով եւ մուիրատուութեամբ մրցանակներ հաստատուած էին նաեւ հետեւեալ մարզերուն մէջ առաջին համդիսացողներուն. ա) ուսման բ) աշխատանքային աշխատասիրութեան գ) մարքութեան դ) երգեցողութեան ե) արտասանութեան զ) մարզանքի:

Պատրիարք Սրբազան Հայրը իր գոհումակութիւնը յայտնեց ուսուցիչներուն եւ աշակերտներուն կատարած աշխատանքին համար, եւ քաջալերեց Վարժարանի սաները զարգացնելու իրենց տրուած զանազան Աստուածապարգեւ շնորհները: Մրցումները առիթներ են միայն անցնելու համար հանոյքի զգացումը աշխատանքի, ծառայութեան, ուսման, ընկերսիրութեան, որոնցմով կը կերտուի նաեւ նկարագրի մարդուն: Մեր ազգն ու եկեղեցին կարիքը ունին մարզուած եւ տոկուն հոգեւոր սպասաւորներու:

Ապա "Օրինցէք զՏէր" մաղթերգով եւ Պատրիարք Սրբազան Հօր պահպանիչով աւարտեցաւ Ամալերջի համոզէը:

76-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ

Ուրիշ տարիներու միամ, այս տարի եւս Հայ Երուսաղէմը արժանավայել կերպով մշեց Յուշատօմը Մեծ Եղեռնին:

24 Ապրիլ, Չորեքշաբթի առաւօտ, մեծ բազմութիւն մը լեցուցած էր Ս. Յակոբեանց Մայր Տաճարը: Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ հոգեշունչ քարոզ մը խօսեցաւ Ս. Զատիկի առթիւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Ս. Երուսաղէմ ժամանած Հոգշ. Տ. Սերովբէ Վրդ. Իսախանեանը: Ապա կատարուեցաւ հոգեհամզստեան պաշտօն, գլխաւորութեամբ Ամեմ. Ս. Պատրիարք Հօր: Մայրավանքի մեծ զանգի սգախառն դօղանջներուն հետ, արարողութեանց աւարտին կազմուեցաւ մեծահամդէս թափօր, գլխաւորութեամբ Ամեմ. Ս. Պատրիարք Հօր եւ մասնակցութեամբ քոյր եկեղեցիներու հոգեւորականներու, Հայ Կաթողիկէ համայնքի հովիւ Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Բուպեանի եւ բովանդակ միաբանութեան, առաջնորդութեամբ Հ.Ե.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաւառ-արեւոյշներուն: Թափօրը ուղղուեցաւ Ս. Փրկչի ազգային գերեզմանատունը, ուր Արարչի մահատակաց Յուշարձանին շուրջ, կատարուեցաւ Համզստեան պաշտամունք: Երուսաղէմի Հայ Բարեսիրաց եւ Հ.Ե.Մ. եւ Հ.Մ.Ը.Մ. ակումբներու ներկայացուցիչներ քանի մը լեզուներով պատահաբար բռնած էին թափօրի ըմբացքին, Հայկական ցեղասպանութիւնը դատապարտող եւ մեր արդար իրաւունքները պահանջող: Այս առթիւ կազմուած Յանձնախումբին անունով մահատակաց Յուշարձանին առջեւ խօսք առաւ, Սաղիմահայ գաղութին կողմէ, Պր. Սարօ Նազգաշեան: Վերադարձին, Մայրավանքի մուտքին խաղաղ ցոյց մը կազմակերպուեցաւ:

Տեղական եւ օտար հեռատեսիլի ընկերութիւններ ժապաւէնի առին մասեր թափօրական գնացքէն: Մամուլն ու ձայնասփիւռն ալ ամդրադարձան այս իրողութեան: